

«ԿԱՐԵԼԻ ԶԷ ՈՐ ՂԱՐԱՔԱՂԸ ՀԱՅԵՐՈՒՆ ՏՐՈՒԻ» ...

ՊՈՒԼԿԱՐԻԱ ՇԱՏ ԹՈՒՐՔ ԿԱՅ,
ԿԸՍԷ ՀԻՍՏԻՍՍՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԻՒՖԹԻՆ

Պուլկարիոյ շատ մը մղկիթներու մէջ քարոզած բնաւ պնդող հիւսիսային Կովկասի միւֆթիւն՝ Մահմութ Կէօքիւն: ասոնք՝ Պուլկարիոյ մղկիթները փակող սուլթաններու կողմէ կաղ-մակերպուած բնաւ շրնդունեց: Բայց խոստովանեցաւ որ շատ թուրք կայ Պուլկարիոյ մէջ: Ըսաւ թէ շատ կը հաւնի «Թերճիւման» թերթը: Անդրադարձաւ նաեւ հայերու կողմէ Ղարաբաղի համար ներկայացուած պահանջին, որ պատճառ եղած էր Խորհրդային Միութեան մէջ ստեղծուած խլրտումին եւ հարիւրէ աւելի անձեճրու մահուան, աւելցնելով թէ կարելի չէ որ Ղարաբաղը հայերուն տրուի: Եթէ տրուի, կարգ-կանոնը կը խանդարուի Խորհրդային Միութեան մէջ:

Կրօնական հարցերու նախարարութեան հրաւերով Թուրքիա գտնուող եւ երէկ կէսօրին նամակը Հանրայնամ մղկիթին մէջ ընող Կէօքիւն, իր գտնուած պանդոկին մէջ «Թերճիւման»-ի թղթակիցը տեսած ատեն «Թերճիւմանը ամենալաւը եւ ամենաճիշդը կը գրէ», ըսաւ: Իրեն կ'ենկարանային Մուհամմէտ Ծանեւ, Տաւութ Պիքմայեւ եւ Խ. Միութեան Անքարայի դեսպանատան խորհրդական Անաթոլի Քատիրով: Իր այցելութեան շուրջ տրուող լուրը կարդացող Կէօքիւն շատ նեղուեցաւ երբ տեսաւ որ գինք «Կորպաշովի միւֆթիւն»-ը սրակած էին:

- «Ես Կորպաշովին միւֆթիւն չեմ: Մենք անկախ ենք: Ես հոս եկայ առանց արտօնութիւն առնելու Կորպաշովէն: Անկախ լուր չունի: Թէեւ «Կորպաշովի միւֆթիւն»-ը բացատրութիւնն ալ գէշ չէ, բայց աւելի լաւ պիտի ըլլար, եթէ ըսուէր Հիւսիսային Կովկասի միւֆթիւն», ըսաւ:

ԹՈՒՉՏԵՐ ԵՆ ...

Ամէն առիթով սուխտ ղեկավարը երկինքները բարձրացնող Մահմուտ Կէօքիւն՝

- «Կորպաշովը եկաւ, հանգստացանք: Կրպնոսք եւ վերեւքրոյքա մեզի մեծ հանգստութիւն ապահովեցին: Կրցանք շատ մը մղկիթներ բանալ: Կարծէք մեր թեւերը բացուեցան», ըսաւ:

Յայտնեց թէ Պուլկարիա գտնուած ատեն խօսակցած է շատ մը թուրքերու հետ եւ միշտ թրքերէն խօսած է:

- «Պուլկարիա շատ թուրք կայ: Շատերուն հետ խօսեցայ: Ուղեցին որ յաճախ դանք: Անոնք ալ կ'ուզեն գալ: Անոնք մեզի կուզան, մենք անոնց կ'երթանք: Իսլամ եղբայրները իրարու այցելութեան երթալու են: Մենք ալ այս նպատակով կ'երթանք: Շատ լաւ դիտեն թրքերէնը: Մեր խօսակցութեանց ընթացքին միշտ մեր հարապատ լեզուն՝ թրքերէնը գործածեցինք»:

ՂԱՐԱՔԱՂԸ ԶԻ ՏՐՈՒԻՐ

Վերջին օրերս Խորհրդային Միութեան մէջ ստեղծուած խլրտումներուն եւ հարիւրէ աւելի մահերու պատճառ եղաւ Ղարաբաղի հարցին ալ անդրադառնալով Մահմութ Կէօքիւն ըսաւ թէ հայերուն ըրածը աւելորդ ճիգ մըն է, որովհետեւ Ղարաբաղը կարելի չէ որ տրուի», ըսաւ:

Կէօքիւն նաեւ աւելցուց որ Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան ընդհանուր քարտուղարը՝ Միխայիլ Կորպաշով չ'ուզեր որ Ղարաբաղը հայերուն տրուի, որովհետեւ տրուելու պարագային՝ անկարգութիւններ ծայր պիտի տան:

Կէօքիւն սապէս եզրակացուց իր խօսքերը.

- «Կարելի չէ որ Պարաբաղը հայերուն տրուի: Հայերը ուզածնին չափ թող ուզեն, Ղարաբաղը որոշապէս չի տրուիր: Կորպաշովն ալ այսպէս ըսաւ: Այսինքն՝ ըսաւ որ Ղարաբաղը չի տրուիր: Ես ալ իրրեւ թուրք՝ նոյն բանը կ'ըսեմ: Հիմա եթէ հայերը գան եւ թուրքիոյ մէկ մասը ուզեն, դուք կուտա՞ք: Անշուշտ չէք տար: Ահա՛, Ղարաբաղն ալ այսպէս է: Եթէ Խորհրդային Միութեան հանրապետութիւններէն որեւէ մէկուն մէկ ջրջանը ուրիշներուն տրուի, կարգ-կանոնը կը խանդարուի: Հոն գտնուող թուրքերն ու հայերը իրարու հետ եղբայր ապրելու են»:

Աւելորդ կը գտնենք որեւէ մեկնարանութիւն կատարել այս առիթիւ: Թուրքը ամէն տեղ ինքզինք կը զլայ եւ կը գործէ իրրեւ թուրք: